

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 30/7

ք.Երևան

1 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան մաքսատուն-վարչությանը ներկայացված հայտարարագրերը ճշգրտելու կամ չեղարկելու վերաբերյալ «ԳԱՊԷՔՍ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

«ԳԱՊԷՔՍ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ ընկերություն) կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան մաքսատուն-վարչությանը ներկայացված հայտարարագրերը ճշգրտելու կամ չեղարկելու վերաբերյալ:

Իրավահարաբերության պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրումն իրականացվում է ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդի, ապրանքների մաքսային արժեքի մեծության, մաքսային արժեքի որոշման հետ առնչություն ունեցող՝ արտաքին տնտեսական գործարքի հանգամանքների և պայմանների վերաբերյալ տեղեկությունների հայտարարագրման, ինչպես նաև դրանք հիմնավորող փաստաթղթերի ներկայացման միջոցով:

Նույն օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարագրողների կամ մաքսային ներկայացուցիչների կողմից, որոնք գործում են հայտարարագրողի անունից և նրա հանձնարարությամբ:

«Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ պարբերության համաձայն՝ մաքսային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, իսկ մաքսային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել այն կատարելու կամ ցուցաբերելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

Նույն հոդվածի 10-րդ պարբերության 8-րդ կետի համաձայն՝ մաքսային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե բացակայում է մաքսային մարմնի կողմից բողոքարկվող անհատական իրավական ակտի, գործողության կամ անգործության դեպքը, իսկ 9-րդ կետի համաձայն՝ եթե դիմում-բողոքը ներկայացվել է նույն հոդվածով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Քննարկվող դեպքում «ԳԱՊԷՔՍ» ՍՊԸ դիմում-բողոքը վերաբերվում է ընկերության կողմից ներկայացված հայտարարագրերը ճշգրտելուն կամ չեղարկելուն: Այսինքն, ըստ էության, բացակայում է մաքսային մարմնի կողմից բողոքարկվող

անհատական իրավական ակտի, գործողության կամ անգործության դեպքը:

Եթե անգամ դիտարկենք, որ դիմում-բողոքը ներկայացվել է մաքսային ծառայողի գործողությունների կամ անգործության դեմ, ապա այն ներկայացվել է «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ԳԱՊԷՔՍ» ՍՊԸ-ի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Դ.ԱՆԱՆՅԱՆ

